ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի տասնամյակի առթիվ)

Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ

Հայ ժողովուրդը Առաջավոր Ասիայի պատմական առաջընթացի հնագույն և գործուն մասնակիցներից մեկն է։ Աշխարհի այդ շրջանի տնտեսության ու մշակույթի զարգացման գործում նրա դերը հիշատակված է գրավոր ու նյութական հուշարձաններում։ Նյութական մշակույթի հուշարձանները, չնայած ժամանակի ներգործությանը, տարերային աղետներին ու միտումնավոր ոչնչացմանը, հիմնականում պահպանվել են, իսկ գրավոր հուշարձանների մեծ մասը հասել է մեզ ու պահվում է Երևանի, Մոսկվայի, Թբիլիսիի, Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի, Վենետիկի, Լիվոռնոյի, Երուսաղեմի, Մադրասի, Նոր-Ջուղայի և այլ քաղաքների պահոցներում ու արխիվներում, ինչպես նաև մասնավոր հավաքածուներում։

Վերջին տասնամյակներում այդ աղբյուրների զգալի մասը հրատարակվել կամ վերահրատարակվել է ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն ու եվրոպական լեզուներով։ Սակայն դա միայն մի մասն է այն հարուստ գրավոր ժառանգության, որ մնացել է հայ գրի ավելի քան 1600-ամյա գոյության ընթացքում։

Մեծ է հայկական աղբյուրների նշանակությունը Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների պատմության ուսումնասիրման տեսակետից։ Հաճախ դրանք ըսկզբնաղբյուրներ են, երբեմն՝ հազվագյուտ սկզբնաղբյուրներ այդ երկրների ու ժողովուրդների պատմության այս կամ այն ժամանակաշրջանի լուսաբանման համար։ Ըստ բովանդակության դրանք կարելի է բաժանել երկու խմբի. Հայաստանի ու հայ ժողովրդի պատմությանը նվիրված աղբյուրներ, որոնք միայն անուղղակիորեն են լուսաբանում մյուս ժողովուրդների պատմության առանձին հատվածները, և հատկապես Արևելքի ժողովուրդների պատմության ու մշակույթին վերաբերող գրավոր հուշարձաններ։

Առաջին խմբին են դասվում V դ. հայ պատմիչներ ու մտածողներ Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Եզնիկ Կողբացու, Փավստոս Բուզանդի, VII դ. հեղինակներ Անանիա Շիրակացու, Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի և ավելի ուշ շրջանի մատենագիրներ Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Արիստակես Լաստիվերտցու, Մխիթար Գոշի, Կիրակոս Գանձակեցու, Աբրահամ Երևանցու և այլոց երկասիրությունները։ Հարուստ նյութեր կան հայկական ձեռագրերի բազմաթիվ հիշատակարաններում[1]

---

[1] «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան (1401—1500), Երևան, 1955—1960 թթ., մաս 1, 2, 3։

և միջնադարյան հեղինակների ու ականատեսների ժամանակագրություններում[2]։ Այդ ձեռագրերը պահվում են Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում, ինչպես նաև աշխարհի այլ ձեռագրապահոցներում։

Անմիջականորեն Արևելքի ժողովուրդների պատմությանը վերաբերող աղբյուրների մեջ կան հանրագիտարանային բնույթի ստեղծագործություններ։ XI դ. հեղինակ Ստեփանոս Տարոնացու (մականվանյալ Ասողիկ) «Համընդհանուր պատմության» մեջ, ինչպես նաև XIII դ. հեղինակ Վարդան Արևելցու երկում աշխարհագրական, պատմական, քաղաքական, տնտեսական և ազգագրական հարուստ տեղեկություններ կան Արևելքի երկրների ու ժողովուրդների մասին։ Գրիգոր Դարանաղցին (Կամախեցի, 1576—1643) իր «Ժամանակագրության» մեջ նկարագրել է օսմանյան կայսրության, Իրանի, Եգիպտոսի, Եթովպիայի և այլ երկրների կյանքն ու սոցիալ-տնտեսական հարաբերությունները։ Իր եռահատոր «Պատմագրության» մեջ Զաքարիա Սարկավագը տալիս է Սեֆյան Իրանի մանրամասն պատմությունը և նկարագրում XVII դ. իրանա-թուրքական պատերազմները։

Ուշ միջնադարի հայ պատմագրության կարկառուն ներկայացուցիչ Առաքել Դավրիժեցու (1600—1670) «Պատմության» նկատմամբ հետաքրքրությունը բացատրվում է նրանով, որ այդ մեծարժեք աշխատության մեջ ընդգրկված են ժամանակի առաջավոր Ասիայի կարևորագույն իրադարձությունները, բնութագրված են Իրանի ու Թուրքիայի տիրակալների, մասնավորապես Շահ Աբբաս I-ի քաղաքականությունն ու գործունեությունը, ինչպես նաև Ջալալիների շարժումը։ Ղուկաս Ինճիճյանն ու Ստեփանոս Ագոնցը XIX դ. սկզբին մի քանի հատորով հրատարակեցին «Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի» արժեքավոր աշխատությունը, որի մեջ հանգամանորեն ներկայացված են օսմանյան կայսրությունը, Իրանը, Հնդկաստանը, Բիրման, Ինդոնեզիան, Չինաստանը, Ճապոնիան և այլ երկրներ։

Հաղվագյուտ և հետաքրքրական աղբյուր է Կոստանդ Ջուղայեցու դեռևս չհրատարակված «Աշխարհաժողով գիրքը», որը մանրամասն տեղեկություններ է պարունակում Հնդկաստանի, Բիրմայի, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների, ինչպես և Աֆրիկայի մի շարք երկրների առևտրական-տնտեսական կյանքի մասին։

Կան նաև ձեռագիր բազմաթիվ տեքստեր, որոնք ազգագրական նկարագրություններ են տալիս XVI—XVIII դդ. Հնդկաստանի վերաբերյալ[4]։

Ուշագրված է հայ վաճառական Հակոբ Սիմոնյանի «Հայդար Ալիի կենսագրությունը», որ հրատարակված է «Ազդարար» հանդեսում[5]։

Հետաքրքրական է Նորջուղայեցի վաճառական-ծովագնաց Թովմաս Խոջամալյանի «Հնդկաստանի պատմությունը»[6]։

---

2 «Մանր ժամանակագրություններ 13—18 դդ.», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հատ. 1, Երևան, 1951, հատ. 2, Երևան, 1956։

3 Մատենադարան, ձեռ. № № 5994, 8443։

4 Նույն տեղում, ձեռ. № № 1721, 3079, 6323։

5 Տե՛ս «Ազդարար» հանդես, 1794—1795 թթ., Մադրաս. երկու լրիվ հավաքածուներ կան Մատենադարանում։ Սիմոնյանը անձնական կապեր է ունեցել Հայդար Ալիի հետ, մասնակցել է 1762—1782 թթ. Մայսորի պատերազմական և քաղաքական իրադարձություններին։

6 Գտնվում է Նոր-Ջուղայի հայկական ձեռագրատներ։

Զաքարիա Ագուլեցու (1630—1691) «Օրագրության» մեջ հարուստ նյութեր կան օսմանյան կայսրության, Իրանի և այլ երկրների քաղաքական ու տնտեսական կյանքի վերաբերյալ։

Հատկապես նշանակալից են առանձին երկրներին ու ժողովուրդներին նվիրված աշխատությունները։ Բացառիկ արժեքավոր են Մովսես Կաղանկատվացու («Պատմութիւն Աղուանից աշխարհի»), Ղևոնդ Պատմիչի («Պատմութիւն Ղեւոնդեանց մեծի»), Գրիգոր Ականցու («Պատմութիւն աղգին Նեստորեաց»), Թովմա Մեծոփեցու («Պատմութիւն Լանկ-Թեմուրայ և յաջորդաց իւրոց») և հայ այլ հեղինակների աշխատությունները։

Միջնադարյան հայ մտածողներն ու քաղաքական գործիչները մշակութային ու գործարար փոխադարձ կապեր են ունեցել արաբների հետ, որոնք արտացոլում են գտել գրականության մեջ (Աբու Սալիհ ալ-Արմանիի «Եգիպտոսի վանքերի և եկեղեցիների պատմությունը» և այլն)։

Նշանակալից տեղ են գրավում Իրանի և նրա սահմանակից երկրների պատմությանը նվիրված աշխատությունները։ Դրանցից են 1585 թ. թուրքերի կողմից Թավրիզի գրավման ականատես Սիմեոն Ապարանցու «Ի վերայ առմանն Թավրիզու», Խաչատուր Ջուղայեցու «Պատմություն պարսից» (այն տալիս է XVIII դարում իշխող դինաստիաների ու թագավորների ժամանակագրությունը և դեպքերի վերլուծությունը), Պետրոս Դի Սարգիս Գիլանենցի «1722—1723 թթ. Աֆղանների կողմից Սպահանի պաշարման օրագիր», Աբրահամ Կրետացու «Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-շահին պարսից», Տամբուրչի Քուչուկ Հարությունի «Թահմասպ Կուլի խանի պատմությունը» և այլ երկասիրությունները[7]։ Այս բոլորը դուրս չի մնացել ժամանակակից Իրանի մտավորականության ուշադրությունից։ Ականավոր բանասեր և պատմաբան Սաիդ Նաֆիսին Փարիզում կարդացած «Հայերը Իրանում» դասախոսության մեջ նշում է, որ Իրանի պատմությունը չի կարելի գրել առանց հայկական աղբյուրների[8]։ Նույն միտքն է արտահայտել նաև պատմաբան Նասրոլլա Ֆալսաֆին։

Հայ պատմագրության մեջ հատուկ տեղ է գրավում օսմանյան կայսրությունը։ Թուրք պատմաբաններն իրենք են ընդունում, որ մինչև XV դ. թուրք ժողովուրդները չեն գրել իրենց պատմությունը։ «Թուրքը պատմությունը ստեղծում էր, բայց չէր գրում,— ասում է Խ. Ն. Օրկունը,— այդ իսկ պատճառով մենք թուրք ժողովրդի պատմության վերաբերյալ աղբյուրներ ենք որոնում այլ ժողովուրդների պատմագիտական աշխատություններում»[9]։ «Թուրքական պատմագրության մեջ,— ավելացնում է նա,— հայկական աղբյուրները գրավում են կարևոր տեղ»[10]։ Հայկական շատ աղբյուրներ արդեն թարգմանված են թուրքերեն։

Կարևորագույն աշխատություններից են նաև XVI դ. վերջի և XVII դ. սկզբի հեղինակ Սիմեոն Լեհացու «Ուղեգրությունները», որը հարուստ նյութ է պարունակում կայսրության սահմաններում բնակված ժողովուրդների պատմության, աղգագրության և մշակույթի վերաբերյալ, Հակոբ Կարնեցու «Տեղագիր վերին հայոց», Ագարիա Սասնեցու «Ողբ ի վերայ հարուածոց արևի-

7 Մատենադարան, ձեռ. № 6548։
8 Տե՛ս «Ալիք», 1956, № 12—13, XII։
9 H. N. Orkun, Turk tarihi, c. 1, Ankara, 1946, էջ 5։
10 Նույն տեղում, էջ 10։

լեան գավառացն և աշխարհին հայոց ի ձեռաց Ճելալեանց» երկը։ Հայտնի մըտածող ու գիտնական Երեմիա Չելեբի Քյոմուրճյանը (1637—1695) թողել է շատ աշխատություններ. դրանցից հրատարակված են «Ստամբուլի պատմությունը» և «Օրագրությունը», որոնցում փաստական շատ տվյալներ կան Թուրքիայի պատմության մասին։ Հեղինակի մյուս աշխատություններից հետաքրքրական են «Օսմանյան թագավորների 400-ամյա տիրապետության համառոտ պատմությունը՝ Օսման սուլթանից մինչև այժմյան Մուհամմեդը»[11], «Ժամանակագրական պատմությունը», որը Թուրքիայի՝ XVII դ. եվրոպական պետությունների դեմ մղած պատերազմների, նրա կրած տարերային աղետների ու համաճարակների նկարագրությունն է[12]. «Կոստանդնուպոլսի հրդեհի պատմությունը» (հրդեհը տեղի է ունեցել 1660 թ. հուլիսի 14-ին)[13] և այլն։

Այս համառոտ հաղորդման մեջ դժվար է հիշատակել բոլոր աշխատություններն ու աղբյուրները։ Մենք չենք անդրադառնում նաև այն հեղինակներին, որոնք գրել կամ հրատարակվել են ոչ թե հայերեն, այլ ուրիշ լեզուներով (Mouradjean d'Ohsson, M. Seth, Sandaljian, Yakub Artin և ուրիշներ)։ «Եվրոպայի գիտնականները,— գրում է Վ. Բարտոլդը,—XIX դ. սկզբին հիմնականում հետաքրքրվել են հայկական պատմական գրականությամբ, որտեղ հուսացել են նյութեր գտնել առաջավոր Ասիայի պատմության մասին»[14]։

XIX դարը նշանավորվեց Եվրոպայի ու Ասիայի տնտեսության և մշակույթի ընդհանուր զարգացմամբ, ինչպես նաև նրանց փոխադարձ կապերի աշխուժացումով։ Արևելքի երկրներում դիվանագիտական գործունեության համար մասնագետների պատրաստման նպատակով Ռուսաստանում ստեղծվում են մի շարք արևելագիտական հիմնարկներ ու ամբիոններ, իսկ արևելագիտությունը առանձնանում է որպես գիտության ինքնուրույն ճյուղ։

Զգալի տեղաշարժեր են կատարվում նաև Արևելքի երկրներում։ Աշխուժանում է քաղաքական և մշակութային կյանքը, իրենց գործունեությունն են ծավալում լուսավորչական կազմակերպությունները, հրատարակչությունները, զարգանում են գրականությունը, կրթությունն ու մշակութային կապերը։

Առաջադիմական այդ ընդհանուր շարժման մեջ զգալի դեր խաղաց հայ հասարակայնությունը, որը բազմաթիվ թելերով և, առաջին հերթին, հայ գաղթօջախների միջոցով կապված էր Արևելքի տարբեր երկրների հետ։ Հայ մշակույթի և արևելագիտական մտքի օջախներ են դառնում Մոսկվան ու Պետերբուրգը, Էջմիածինն ու Թիֆլիսը, Կոստանդնուպոլիսն ու Կալկաթան, Վիեննան ու Վենետիկը, Կահիրեն ու Մադրասը, ինչպես նաև Եվրոպայի ու Ասիայի շատ ուրիշ կենտրոններ։

Մոսկվայում այդպիսի կենտրոն դարձավ 1815 թ. հիմնադրված արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը։ Ինչպես նշում է ակադեմիկոս Հ. Օրբելին, «Հայկական այդ ոչ մեծ ուսումնական հիմնարկը դարձավ ռուսական արևելագիտության խոշորագույն ուսումնական ու գիտական կենտրոններից մեկը»[15]։ Իր գոյության առաջին իսկ տարիներից ճեմարանը Կազանի և Պետերբուրգի համալսարանների հետ մեկտեղ դարձավ կադրերի պատրաստման հիմնական

11 Մատենադարան, ձեռ. № 1675։

12 Մխիթարյանների մատենադարան, Վենետիկ, ձեռ. № 509։

13 Երուսաղեմի վանքի հայկական մատենադարան, ձեռ. № 892։

14 В. Бартольд, История изучения Востока в Европе и России, Л., 1925, էջ 291։

15 Տե՛ս Л. П. Базиянц, Лазаревский институт восточных языков, М., 1959, էջ 3։

օջախներից մեկը։ Այստեղ են կրթություն ստացել կամ աշխատել հայտնի արևելագետներ Ն. Աշմարինը, Խ. Բարանովը, Վ. Գորդլևսկին, Ն. Դմիտրովը, Ֆ. Կորշը, Ա. Կրիմսկին, Բ. Միլլերը, Վ. Մինորսկին, Ա. Սեմյոնովը և ուրիշներ։ Նրանց հետ մեկտեղ աճել ու ձեռք ձեռքի տված աշխատել են հայկական մշակույթի ականավոր ներկայացուցիչներ Ս. Սաղարյանը, Ն. Էմինը, Գ. Կանանովը, Լ. Բուդաղովը, Ք. Պատկանյանը, Գ. Խալաթյանը, Լ. Մսերյանցը և շատ ուրիշներ։ Գիտա-մանկավարժական գործունեությունից բացի, նրանք ռուսերեն և օտար լեզուների են թարգմանել Արևելքի ժողովուրդների ու երկրների վերաբերյալ հայկական բազմաթիվ աղբյուրներ։ XIX դ. կեսից հայերենից, արաբերենից, պարսկերենից ու թուրքերենից բայի ճեմարանում մտցվեցին վրացերենի, ադրբեջաներենի, դասական ու եվրոպական լեզուների դասընթացներ։ Ճեմարանի տպարանում 13 լեզուներով հրատարակվում էին արևելագիտական գրականություն և ուսումնական ձեռնարկներ։ Լաղարյան ճեմարանի հետ կապված էին եվրոպական ու ասիական արևելագիտական շատ կենտրոններ և նշանավոր գիտնականներ։ «Ռուսական գիտությունը,— նշել է Վ. Բարտոլդը,— հայկական ու վրացական ծագումով գիտնականներին է պարտական ինչպես Ռուսաստանում գիտական հայացքների տարածման, այնպես էլ հետագայում եվրոպական գիտության մեթոդների հիման վրա դրանց ճշտման համար»[16]։

Հայ գիտնականները գիտական հետազոտություններ էին կատարում նաև աշխարհի այլ մշակութային կենտրոններում։ Նոր ժամանակների ամենանշանավոր հայ արևելագետ գիտնականն էր արաբերենի, պարսկերենի, թուրքերենի գիտակ, այդ լեզուների բառարանների, մի շարք աշխատությունների հեղինակ Գևորգ Դպիրը։ Թուրքիայի պատմության գծով նշենք Գ. Այվազովսկու եռահատոր «Օսմանյան պետության պատմությունը սկզբից մինչև 1839 թ.» (Վենետիկ, 1841 թ.) և «Օսմանյան սուլթանների ու վեզիրների կյանքի ու գործունեության պատմությունը» (Վենետիկ, 1848 թ.)։ Ականավոր պատմաբան ու գրող Ղևոնդ Ալիշանի (1820—1901) աշխատություններում փաստական հարուստ նյութեր կան Արևելքի երկրների ու ժողովուրդների մասին։ Վենետիկում հրատարակվել են նրա «Այրարատ», «Սիսուան», «Սիսական», «Շիրակ» կապիտալ գործերն ու այլ ստեղծագործությունները։ Օսմանյան պետության սոցիալ-տնտեսական հարաբերություններն ու ներքին քաղաքականությունը համակողմանիորեն լուսաբանված են Դադյանի «Օտոմանյան կայսրության հայերը» (Թիֆլիս, 1878 թ.) աշխատությունում, Գ. Սրվանձտյանցի ազգագրական ժողովածուներում (5 հատոր), Մ. Մամուրյանի «Անգլիական նամակներում» (Զմյուռնիա, 1881, երկեր, Երևան, 1966), Պ. Նաթանյանի «Տեղեկություններ Բալու... Խարբերդի և այլ գավառների մասին» (Կոստանդնուպոլիս, 1883) ուսումնասիրության մեջ, ինչպես նաև Տ. Քելեկյանի, Գ. Նորատունկյանի, Վ. Տոտոմյանցի, Հ. և Է. Թոփչյանների գործերում, XIX դ. 70-ական թթ. մինչև առաջին համաշխարհային պատերազմը պարբերական մամուլում հրապարակված հոդվածներում և վիճակագրական ժողովածուներում։ Իրանի պատմությանն ու մշակույթին նվիրված են Մ. Թաղիադյանի «Պարսկաստանի պատմությունը» (Կալկաթա, 1846 թ.), Ա. Տեր-Հովհանյանի երկհատոր «Նոր Ջուղայի պատմությունը» (Նոր-Ջուղա, 1880), Գ. Էզովի «Պետրոս մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» (Ս. Պետերբուրգ, 1898), Լ. Տիգրանովի

[16] В. Бартольд, նշվ. աշխ., էջ 293։

«Պարսկաստանի հասարակական-տնտեսական հարաբերությունների պատմությունից» (Ս. Պետերբուրգ, 1909), Հ. Առաքելյանի «Պարսկաստանի հայերը, նրանց ներկան, անցյալն ու ապագան» (Վիեննա, 1911) և այլ աշխատություններ։ Արևելքի երկրների հին և նոր պատմության, ժամանակի քաղաքական անցուդարձի մասին բավական հարուստ նյութեր են պարունակում Եվրոպայում, Ռուսաստանում, Հնդկաստանում, Թուրքիայում և այլուր լույս տեսած հայ պարբերականները։

Հայ արևելագիտությանը զգալի ծառայություն են մատուցել Վենետիկի ու Վիեննայի Մխիթարյանները։ Բացի արդեն հիշված աշխատություններից, կարելի է նշել Գ. Մսերլյանի, Մ. Սեթյանի, Հ. Ջրաքյանի, Ն. Անդրիկեյանի, Բ. Խալաթյանցի, Ղ. Հովնանյանի, Հ. Եսայալյանի, Հ. Պողոսյանի և ուրիշ շատերի գրքերն ու հոդվածները Թուրքիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի, արաբների և Արևելքի տարբեր երկրների ու ժողովուրդների պատմության, ինչպես նաև վերջիններիս ու հայ ժողովրդի պատմական ու մշակութային կապերի վերաբերյալ։ Այս իմաստով հատուկ ուսումնասիրության են արժանի «Բազմավեպ» ու «Հանդես ամսօրյա» պարբերականները և Մխիթարյանների մի շարք ուրիշ հրատարակություններ։

Անհրաժեշտ է նշել, որ XX դ. սկզբին հայ արևելագետները ոչ միայն մշակեցին Մերձավոր ու Միջին Արևելքի պատմության մի շարք կարևորագույն խնդիրներ, այլև ծանրակշիռ ավանդ ներդրին ուրարտագիտության ու բյուզանդագիտության զարգացման գործում։ Հանրահայտ են Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոս կայսեր ժամանակ» (Ս. Պետերբուրգ, 1908) հետազոտությունը։ Արտասահմանյան հայ հեղինակներից հայտնի են Ա. Ալպոյաճյանի (մասնավորապես նրա «Հայ գաղթականության պատմության» I և II հատորները, Կահիրե, 1961), Ա. Սյուրմելյանի («Հալեպի հայերի պատմությունը», հատոր I, Բեյրութ, 1946 թ., հատ. II, Փարիզ, 1950 թ.) և այլ գիտական երկասիրություններ։

* * *

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը և Հայաստանում սովետական կարգերի հաստատումը չափազանց բարենպաստ պայմաններ ստեղծեցին մեր ամբողջ մշակույթի, գիտության բոլոր ճնաղավառների զարգացման համար։ 1920 թ. բացվում է Երևանի պետական համալսարանը։ Հենց այդ ժամանակ էլ նախատեսված է եղել մյուս ֆակուլտետների կողքին հիմնել նաև արևելագիտության ֆակուլտետը, ծրագրում ունենալով պարսկերեն և քրդերեն լեզուները։ Սակայն արևելագիտական առարկաների դասավանդումը սկսվում է 1923 թ.։ Գ. Ասատուրը կարդում է արևելյան գրականության կուրս, մտցվում է վրացերենի և պարսկերենի դասավանդումը։ Ընդհանուր պատմության մեջ հատուկ տեղ է հատկացվում Արևելքի ժողովուրդների պատմությանը։ 1940 թ. բացվում է արևելյան լեզուների և գրականության ամբիոնը, որի ղեկավարությունը իր վրա է վերցնում բազմավաստակ գիտնական Հ. Աճառյանը։ Հենց այդ ժամանակ էլ բանասիրական ֆակուլտետի կազմում ստեղծվում է համապատասխան բաժին երկու ճյուղով՝ պարսկերեն և արաբերեն լեզու և գրականություն։ 1962 թ. մտցվում են նաև թուրքերեն լեզուն ու գրականությունը։ Վերջապես հիշյալ բաժնի հիման վրա ընթացիկ տարում բացվում է ինքնուրույն արևելագիտական ֆակուլտետը, ունենալով երկու մասնագիտական ուղղություն՝ լեզու-գրականություն և պատմություն։

Կազմակերպական այս միջոցառումներին զուգահեռ կատարվում է լուրջ գիտահետազոտական և հրատարակչական աշխատանք։ Լույս են տեսնում Հ. Աճառյանի Արմատական բառարանը, Հայոց լեզվի պատմությունը՝ պարսկական փոխառություններին նվիրված բաժնով, լիակատար քերականությունը, որտեղ հարուստ նյութ կա իրանական և սեմական լեզուների մասին։ Օտար աղբյուրները հայերի մասին սերիայով լույս են տեսնում նույն հեղինակի աշխատությունները Ֆիրդուսու և Բրն-Ի-Բատուտայի մասին։ Հրատարակվում են նրա պատրաստած վավերագրերը հայ-պարսկական հարաբերությունների մասին, պարսկերեն լեզվի ձեռնարկը և պարսկական հատընտիրը։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը լույս է ընծայում իր ֆունդամենտալ ուսումնասիրությունները՝ Հայ ժողովրդի քննական պատմություն, Հայաստանի քաղաքները և առևտուրը (կապված հին դարերում միջազգային առևտրի հետ), ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Հայաստանի պատմությունը Թուրք-Թաթարական արշավանքների շրջանում և այլ գործեր, տալով չափազանց կարևոր ամփոփումներ քննարկվող երկրների և ժողովուրդների պատմության վերաբերյալ։ Մեծ է ակադեմիկոս Գ. Ղափանցյանի ներդրումը Հին Արևելքի պատմության ուսումնասիրման մեջ։

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր նյութեր են պարունակում ականավոր հայ պատմաբան Լեոյի (Առաքել Բաբախանյան) եռհատոր «Հայոց պատմությունը», «Խոջայական կապիտալը» և այլ աշխատությունները։ Հանրապետությունում արևելագիտության զարգացմանը նպաստեց պրոֆ. Ռ. Աբրահամյանի, Հովհ. Հակոբյանի և շատ ուրիշների գործունեությունը։ Այնուհետև այս ուղղությամբ դգալի աշխատանք կատարեցին պրոֆ. Է. Աղայանը իր լեզվաբանական ուսումնասիրություններով, պատմաբան Տ. Հակոբյանը, լեզվաբան, արևելագիտական ֆակուլտետի դեկան Ռ. Նալբանդյանը և շատ ուրիշ դասախոսներ։ Շնորհիվ համալսարանի ռեկտոր և արևելագիտության ամբիոնի վարիչ Մ. Ներսիսյանի ջանքերի, արևելագիտական աշխատանքները համալսարանում ստացել են չափազանց բարեհաջող ընթացք։

Արևելագիտական որոշ աշխատանք կատարվել է նաև ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալում։ Այստեղ հրատարակվել են մի շարք աշխատություններ և հոդվածներ հայ ժողովրդի պատմության և հարևան երկրների վերաբերյալ։ 1930—40-ական թթ. շարունակվել են հին Արևելքի երկրներին նվիրված ուսումնասիրությունները։ Հ. Մանանդյանը ապացուցել է նրանց խիստ անհրաժեշտությունը սկզբնաղբյուրների հիման վրա, քանի որ, օրինակ, Հռոմի տիրապետության ժամանակաշրջանի մասին աղբյուրները եղել են ոչ օբյեկտիվ ու «պատմական անցքերը նկարագրել են կողմնապահությամբ և հռոմեացիների օգտին»։ Հեղինակը մեղադրում է ժամանակի տիրապետողներին և շարունակում. «Առաջավոր Ասիայի հետագա կուլտուրական հետադիմության համար ամենամեծ պատասխանատվությունը ընկնում է պարզապես Հռոմի վրա»[17]։ Նույնը, ավելի ուշ ժամանակների համար, կարելի էր ասել թաթար-սելջուկների և ապա օսմանյան Թուրքերի մասին։ Արմֆանի տարիներին և ավելի ուշ շրջանի մշակված թեմաների շարքին են պատկանում արաբ-

[17] Ակադ. Հ. Մանանդյան, Տիգրան Բ և Հռոմը, Երևան, 1940, էջ 8, 10։

ների տիրապետության, նրանց վարչաձևի, հարկային քաղաքականության, ժողովրդական ապստամբությունների խնդիրները (Բ. Առաքելյան, Հ. Նալբանդյան, Ա. Տեր-Ղևոնդյան), Կիլիկյան պետության, մոնղոլների շրջանի պատմությունը (Գ. Միքայելյան, Ա. Գալստյան), հայ ազատագրական պայքարի դրվագները թուրք և պարսիկ իշխանությունների դեմ (Վ. Մելիքսեթյան, Ա. Միրզոյան և ուրիշներ)։

Գիտությունների ակադեմիայի հիմնադրումը նոր խթան հանդիսացավ արևելագիտության զարգացման համար։ Պատմության ինստիտուտում և էկոնոմիկայի սեկտորում ծավալվեցին լայն աշխատանքներ հայ ժողովրդի և հայ գաղթօջախների պատմության վերաբերյալ։ Եվ որովհետև «հայ ժողովրդական մասսաները ազատություն էին որոնում սրբերով զոտեպնդված արևելյան նվաճողների դեմ», իսկ «մյուս կողմից թերահավատությամբ էին դրահված և խաչերով վահանավորված արևմտյան «ազատարարների» դեմ»[18], ապա հայ մտավորականները պետք է մշակեին ազատագրական պայքարի այդ բարդ իրադրությունը, նրա տարբեր շրջանների պատմությունը, որի արդյունքը հանդիսացան վերջին երկու տասնամյակում տպագրված և արևելագիտական հարուստ նյութեր պարունակող մենագրությունները, ժողովածուներն ու առանձին աշխատությունները[19]։

Ավելի նպատակասլաց դարձան արևելագիտական աշխատանքները սկսած 1954 թ., երբ պատմության ինստիտուտում ստեղծվեց Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմությունը և տնտեսությունն ուսումնասիրող խումբը։ 1958 թ. մեր ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց արևելագիտական գիտահետազոտական կենտրոն՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արևելագիտության սեկտորը։

---

18 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 631։

19 Ս. Կ. Զուլալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ (XVI—XVII դդ.), 1966։ Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, 1961։ «Հայ-ռուսական հարաբերությունները XVII դարում», փաստաթղթերի ժողովածու, 1953։ Հ. Ֆ. Փափազյան, Մատենադարանի պարսկական հրովարտակները, պր. 1, 1956, պր. 2, 1959։ Թ. Ավդալբեգյան, Գլխահարկը Թուրքիայում XVII—XVIII դարերում, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1։ П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, Москва, 1954; А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение 80-х годов XVIII столетия, 1947; С. В. Овнанян, Армяно-болгарские связи и армянские колонии в Болгарии во второй половине XIX века, 1968; М. Г. Нерсисян, Освободительная борьба армянского народа против турецкого деспотизма в 1850—1880 годы, 1955; նույն հեղինակի՝ Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., 1955։ Հ. Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., 1967։ Ռ. Փ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դ. 70—80 թթ.), 1965։ Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), 1965։ Ջ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, 1965։ Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, 1965։ Մ. Պ. Աղայան, Մեծ Հոկտեմբերը և Հայաստանի աշխատավորության պայքարը Սովետական իշխանության համար, 1962 և շատ այլ աշխատություններ ու հոդվածներ, որոնց թվարկելը տեղի սղության պատճառով, հիրավի, անհնար է։

Ի տարբերություն Սովետական Միության արևելագիտական այլ կենտրոնների, Հայաստանի գիտական հիմնարկները հնարավորություն ունեն ռուսական, եվրոպական և արևելյան այլ աղբյուրներից ու գրականությունից բացի գիտական շրջանառության ոլորտի մեջ մտցնել հետազոտողների լայն շրջաններին գեռևս անհայտ հայկական աղբյուրներ, գրականություն և պարբերական հրատարակություններ (մոտ 4 հազար անուն)։ Որպես օրինակ կարելի է հիշատակել զփչաղերեն հայատառ աղբյուրները, կամ հայատառ թուրքերենով մամուլն ու գրականությունը (մոտ 1000 անուն), որոնք թուրքալեզու ժողովուրդների, մասնավորապես օսմանյան կայսրության, նրա տերիտորիայում ապրած ժողովուրդների պատմության ուսումնասիրման կարևոր աղբյուրներ են։

Իրենց ամենամոտ հարևանով՝ քրդերով հայերը հետաքրքրվել են վաղուց։ Քրդերի պատմության ու մշակույթի հարցերով զբաղվել են հայ ժողովրդի մըտավորականության այնպիսի ներկայացուցիչներ, ինչպես Խ. Աբովյանը («Քրդերը», «Եզդիները»[20]), Դ. Սրվանձտյանցը[21], Ս. Եղիազարովը[22] և մի քանի այլ ազգագրագետներ։ Թուրքիայում քրդական հարցի սրումը ու հատկապես նրա հայկական խնդրի հետ կապված լինելը քրդագիտության մեջ սկզբնավորեցին քրդերի պատմությունն ու մշակույթը հայերի պատմության ու մշակույթի հետ համատեղ ուսումնասիրող ուղղություն։ Դրա արտահայտությունը եղան բանահավաք Ս. Հայկունու «Հայ-քրդական էպոսի»[23] հրապարակումը, Շահրադյանի «Քուրդ-հայկական պատմություն», Տեր-Մանվելյանի «Կուրմանջի եզդիները» ուսումնասիրությունները։ Արևելագիտական շատ համաժողովներում քրդագիտությունը ներկայացնում էին հայերը։ Արշակ Սաֆրաստյանի «Քրդերը, նրանց ծագումն ու պատմությունը» և «Քրդերն ու Քուրդիստանը» գրքերը, որ լույս են տեսել Լոնդոնում, Բաղդադում հրատարակվել են նաև քրդերեն։ Փարիզում է տպագրված Լ. Մնսրոպի «Քուրդիստան և քուրդերը» դիրքը։ Արժեքավոր, դեռևս չուսումնասիրված նյութեր կան հայկական պարբերական մամուլում և ձեռագիր ֆոնդերում։ Հ. Փափազյանը գտավ ու հրատարակության պատրաստեց Արդաշեշիդ Դումբուլիի «Իշալաթ ալ մալահաբ» հազվագյուտ երկասիրությունը։ Դեռևս XIX դ. կեսերին մի խումբ հայ մտավորականներ Թուրքիայում քրդական մշակույթի զարգացման հատուկ ընկերություն ստեղծեցին, և հայ տառերը գործածվեցին քրդական գրականության հրատարակման համար։ Այդ փորձն օգտագործվեց նաև Սովետական Հայաստանում, մեր դարի քսանական թվականներին։ Հայաստանում հրատարակվում են քրդերեն թերթ, դասագրքեր և այլ գրականություն, գործում է գրողների միության քրդական բաժանմունքը։ Արևելագիտության, և մասնավորապես քրդագիտության բնագավառում մեծ ծառայություններ ունի Հ. Ա. Օրբելին, որը քրդագիտական կենտրոն է ստեղծել Լենինգրադում, դաստիարակելով քրդագետների մի ամբողջ սերունդ։

Ներկայումս արևելագիտության սեկտորի կոլեկտիվը իր հիմնական խնդիրն է համարում ուսումնասիրել Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների նոր

---

20 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 8, Երևան, 1958։

21 Դ. Սրվանձտյանց, տե՛ս նրա ազգագրական ժողովածուները։

22 С. Егиазаров, Краткий этнографический очерк курдов Эриванской губернии. Записки Кавказск. отд. имп. русск. географ. об-ва, том VIII, Тифлис, 1891.

23 С. Айкуни, Армяно-курдский эпос, курдский фольклор, Эминский этнографический сборник, т. 1, 5 и 6. М.—Вагаршапат, 1903—1906.

և նորագույն պատմությունը, տնտեսությունը, գաղափարախոսությունը և մշակույթը։ Այս տեսանկյունից էլ այժմ ուսումնասիրվում են այնպիսի պրոբլեմներ, ինչպիսիք են՝ ազգային-ազատագրական ու դեմոկրատական շարժումները Ասիայի երկրներում, այդ երկրների ներքին և արտաքին քաղաքականության հարցերն ու զարգացման յուրահատկությունները, մոնոպոլիստական կապիտալի՝ այդ երկրների տնտեսության մեջ ներթափանցման ձևերը և միջոցները, իմպերիալիստական պետությունների նեոգաղութատիրական քաղաքականությունը և նրա հետևանքները հիշյալ շրջանի ժողովուրդների համար և այլն։ Հատուկ ուսումնասիրության առարկա են հանդիսանում զարգացող երկրների փոխհարաբերությունները, փոխադարձ տնտեսական և կուլտուրական օգնությունը, ինչպես նաև նրանց կապերը սոցիալիստական երկրների և մասնավորապես Սովետական Միության հետ ու վերջիններիս անշահախնդիր, եղբայրական օգնությունը այդ երկրներին։ Մեր աշխատակիցները խնամքով վեր են հանում հայ ժողովրդի և նրա հարևան՝ արաբ, պարսիկ, հնդիկ, քուրդ և այլ ժողովուրդների պատմական ու մշակութային կապերը, Արևելքի երկրներում սփռված հայ գաղութների պատմությունը և բազմաթիվ այլ հարցեր։

Իրենց բնույթով ու նշանակությամբ այս տարբեր խնդիրների վերաբերյալ սեկտորը արդեն լույս է ընծայել մոտ 40 մենագրություններ, ուսումնասիրություններ, հոդվածների ժողովածուներ և այլ գրքեր։

Հիշատակության արժանի են արևելագիտական ժողովածուները, որոնց հրատարակությունը սկսվեց 1960 թ.։ Առայժմ լույս են տեսել «Արևելագիտական ժողովածուների» երեք հատորներ։ Առաջին երկու հատորներում լուսաբանվել են արևելագիտության մի քանի ընդհանուր պրոբլեմներ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմության, տնտեսության և մշակույթի որոշ հարցեր (օրինակ, իմպերիալիզմի ժամանակաշրջանում՝ Արևելքի ժողովուրդների պայքարի նշանակության լենինյան գնահատականը, ուշ ֆեոդալիզմի զարգացման առանձնահատկությունները Արևելքում, որոշ ժողովուրդների ծագման և զարգացման պրոբլեմը և այլն)։ Վերջին, երրորդ հատորը տարբերվում է առաջիններից նրանով, որ նվիրված է հատկապես արաբական երկրների պատմությանը, ազատագրական, հակաիմպերիալիստական շարժումներին, նրանց զարգացման ժամանակակից էտապի հարցերին, մշակութային կապերին, ներքին ու արտաքին քաղաքականությանը։ Վերջին հատորի համար ընտրվել է նոր խորագիր՝ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրները և ժողովուրդները»։ Այս խորագրի տակ արաբագիտականից հետո լույս կտեսնեն իրանագիտական, թրքագիտական և քրդագիտական հատուկ ժողովածուները։

Բացի այս ընդհանուր աշխատություններից սեկտորի աշխատակիցները ուսումնասիրել և հրատարակել են կարևոր խնդիրներ արծարծող մի շարք գրքեր։ Ավարտվել է «Իրանի ագրարային հարաբերությունները XIX դարում» աշխատությունը, որտեղ ցույց են տրված Իրանում ֆեոդալական կարգերի քայքայման և գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների ներթափանցման պրոցեսը, հողօգտագործման և շահագործման ձևերը, գյուղացիների պայքարը իրենց իրավունքների համար և մի շարք այլ երևույթներ։ «Ժամանակակից Քուրդիստանում մասնավոր հողատիրության բնույթի հարցի շուրջը» աշխատության մեջ համակողմանի քննարկման են ենթարկվում հողատիրության յուրահատկությունները տվյալ շրջանում։ Տնտեսական զարգացման ծրինաչափություններին են վերաբերում Մերձավոր և Միջին Արևելքի երկրների

նավթի պրոբլեմներին նվիրված մի շարք աշխատություններ և հոդվածներ («Պայքար նավթի համար», «Նավթի արաբական կոնֆերանսները», «Արաբական Արևելքը և ընդհանուր շուկան» և այլն), որոնցում ցույց է տրվում արաբ ժողովուրդների պայքարը իրենց տնտեսական անկախության համար և նրանց զարգացման հեռանկարները։ Մյուս կողմից ուսումնասիրվել են ամերիկյան, գերմանական և այլ երկրների մոնոպոլիստական կապիտալի ներխուժումը Թուրքիա և Իրան, վերջիններիս տնտեսական վիճակը և պայքարը տնտեսական ու քաղաքական անկախություն ձեռք բերելու համար։

Բազմաթիվ տպագրված և դեռևս անտիպ գործեր լուսաբանում են միջազգային հարաբերությունները Մերձավոր ու Միջին Արևելքում։ Դրանց թվին է պատկանում «Իրանի միջազգային հարաբերությունները 1813—1828 թթ.» աշխատությունը, որտեղ ցույց են տրված այդ երկրի արտաքին քաղաքականության բնորոշ կողմերը XIX դ. առաջին կեսին և համոզիչ փաստերով ապացուցված է, որ հիշյալ շրջանում Իրանը հաճախ վարում էր ինքնուրույն արտաքին քաղաքական գիծ։ Գրքում կարևոր բաժին է հատկացված Հայաստանի միացմանը Ռուսաստանին, որտեղ գնահատվում է այդ ակտի դրական նշանակությունը մեր ժողովրդի պատմական բախտի համար։ Կարևոր միջազգային հարցեր են շոշափվում «Մերձավոր և Միջին Արևելքում ագրեսիվ խմբավորումների ստեղծման հարցի շուրջը», «Միջազգային դիվանագիտությունը և Ալեքսանդրեթի սանջաքի (Հաթայ) քաղաքական վիճակը 1938 թ. սեպտեմբեր —1939 թ. հուլիս ամիսներին ընկած ժամանակաշրջանում», «Թուրք-իրանական հարաբերությունները XX դ. սկզբին», «Ֆրանս-թուրքական հարաբերությունները 1919—1923 թթ.» և այլ ուսումնասիրություններում։

Թուրքիայի պատմության մասնագետները իրենց գործերում ցույց են տվել այդ երկրի տիրող շրջանների ագրեսիվ քաղաքականությունը Անդրկովկասի նկատմամբ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և հետպատերազմյան ժամանակաշրջանում, Թուրքիայի գերմանական կայսրությանը հարելու պատճառները, պանթուրքիզմի ուժեղացումը և ազգային փոքրամասնությունների նկատմամբ շովինիզմի ու գենոցիդի բաղաքականությունը և այլ հարցեր։ Այս բոլորը արտացոլվել են «Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում», «Երիտթուրքերի ազգային քաղաքականությունը արաբական երկրներում» աշխատություններում, «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ընդարձակ ժողովածուում և այլն։ Սրանց հարակից են այն աշխատությունները, որոնք քննադատության են ենթարկում սովետական և Առաջավոր Ասիայի մի շարք ժողովուրդների ծագման և պատմության հարցերում թուրքական և արևմտյան հեղինակների կողմից թույլ տված խեղաթյուրումները։

Սեկտորի կողմից հրատարակված մի շարք աշխատություններ նվիրված են արաբ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին Իրաքում, Սիրիայում ու Լիբանանում և հայ դեմոկրատական ուժերի մասնակցությանը այդ պայքարին։ Տպագրվել են մի շարք հոդվածներ, որտեղ լուսաբանվում են Իրաքի և Սիրիայի ժողովուրդների պայքարը հանուն անգլիական և ֆրանսիական մանդատի վերացման, արաբական ժողովուրդների ազատագրական շարժումները ընդդեմ օսմանյան բռնապետության։ Հատուկ ուշադրություն է դարձվել Սովետական Միության և սոցիալիստական մյուս պետությունների կապերին Արևելքի երկրների հետ, այդ կապերի զարգացմանը, նրանց գնահատականին։

Ուսումնասիրվել են Թուրքիայի տնտեսական կապերը սոցիալիստական երկրների հետ, քննադատության ենթարկվել ժամանակակից թուրք պատմագրության՝ սովետա-թուրքական հարաբերությունների հակագիտական լուսաբանումը։

Հաջող է ընթացել Արևելքում հայ գաղութների պատմության, հայ և հարևան ժողովուրդների քաղաքական ու մշակութային կապերի, փոխհարաբերությունների և փոխազդեցությունների ուսումնասիրությունը։ Հրատարակության են պատրաստվում Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Իրանի հայ գաղութների պատմությանը նվիրված գործեր։ Հրատարակվել են մեր երկրի նշանավոր թուրքագետներից մեկի՝ հանգուցյալ Ա. Խ. Սաֆրաստյանի պատրաստած «Թուրքական աղբյուրներում Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» ժողովածուի երեք հատորները, պատրաստ է հրատարակության նաև IV հատորը։

Ընթերցողները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին Հ. Նալբանդյանի «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին» ժողովածուի նկատմամբ։ Սեկտորի աշխատակիցները ավարտել են մի շարք կարևոր աղբյուրագիտական գործեր, որոնք շարունակում են ուսումնասիրել հայկական աղբյուրները Իրանի, Հնդկաստանի, արաբական և ընդհանրապես Արևելքի երկրների վերաբերյալ։

Ժամանակակից հասարակական-քաղաքական հոսանքների և դաղափարախոսությունների պրոբլեմին է նվիրված Հ. Նազանյանի «Հասարակական-քաղաքական հոսանքները Իրանում XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին» դիրքը։

Սեկտորի աշխատակիցները դգայի աշխատանք են կատարել հայ-իրանական, հայ-արաբական, հայ-թուրքական լեզվական և գրական առնչությունների և կապերի ուսումնասիրության ուղղությամբ։

Քուրդ ժողովրդի պատմության դեռևս չլուսաբանված պրոբլեմների մշակմանը զուգահեռ Հայաստանի քրդագետները (Ա. Ավդալ, Հ. Ջնդի, Խ. Ջատոև և ուրիշներ) դրաղվում են քուրդ ժողովրդի բանահյուսության, լեզվի ու գրականության ուսումնասիրությամբ։

Սեկտորի ուշադրության կենտրոնում են գտնվում Արևելքի ժողովուրդների վրա Հոկտեմբերյան հեղափոխության, Վ. Ի. Լենինի ուսմունքի, Սովետական Միության փորձի ազդեցության պրոբլեմները։

Գիտական աշխատանքների որակի բարձրացման համար չափազանց կարևոր են դոյություն ունեցող փոխադարձ կապերը և փոխօգնությունը Մոսկվայի, Լենինդրադի, եղբայրական բոլոր հանրապետությունների արևելագիտական կենտրոնների հետ։ Ընդլայնվում են սեկտորի կապերը արաբական երկրների, Իրանի, Հնդկաստանի, Լեհաստանի, Հունդարիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Միացյալ Նահանգների և այլ երկրների բազմաթիվ գիտական հիմնարկների, համալսարանների և առանձին գիտնականների հետ։

Սովետական Հայաստանում ստեղծված են բոլոր պայմանները արևելագիտության հետագա, ավելի բուռն զարգացման համար։